ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ

ԽՐԱՏՔ ՈԳԵՇԱՀՔ

Այս երկու ճառերը ուրիշ երրորդի մը հետ՝ միեւնոյն հեղինակին գրչէն, արդէն «ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ – ԻԳ» շարքին մէջ, տարւոյս նախորդ ամիսները հրատարակեցի. դնելով զանոնք իբր անթառամ ծաղիկ մը՝ տարաժամ մահուամբ թաղշամեալ հոգեկցի մը դամբանին վրայ։

Քրկչական Ցնծրինութեանց հազարիններհարիւրամեայ Յոբելեանին առթիւ, միայն երկուքը կը փափաքինք ծանօթացնել հանրութեան, թէեւ երրորդը՝ թէ ոչ գերագոյն, գէթ միւսներէն վար չէ։

Եկեղեցական ասպարիզին և Աստուծոյ ծառայութեան նուիրեալ անձանց, քահանայական կատարելութեան համար՝ ոսկեհատիկ խրատներ են։ Վստահ թէ «Բազմավէպ»ով աւելի մատչելի կ՚ըլլան հասարակութեան եւ աւելի կարդացող կ՚ունենան, հոս ալ հրատարակուեցան, որպէսզի փրկագործութեան եռանդուն քարոզիչները գիտնան լուսաւորուիլ ասոնցմով, և իրենց մէջ թաքուցեալ աստուածային սիրոյն հուրը՝ կարենան ծաւալել հրդեհել հաւատացելոց սրտին մէջ։

Առաջին անգամն է որ լոյս կը տեսնեն ճառերս։ Յարդ անծանօթ մնացած էին։ Շատ անորոշ կերպով Կիրակոս Գանձակեցիէն գիտէինք անոնց գոյութիւնը։ Հ. Յակոբոս Տաշեան իր «Մայր Ցուցակ»ին մէջ՝ և ոչ իսկ կը ճանչնայ զանոնք։ Կ. Պոլսոյ Նարեկի մը վերջերը (տպ. 1847, 1852), Գոհութեան աղօթք մը կայ հեղինակիս անուամբ, որուն սկիզբը միայն քիչ մը կը նմանի Ա. ճառին՝ և յետոյ կը տարբերի։ Ճառերս ուրեմն նոր են։ Հնութիւնն, իմաստն ու շարամանութեան արուեստը նկատելով՝ կրկին յարգ կ՚առնուն։

Ս. Ղազարու մատենադարանիս Թ, ե, 352 ձեռագրին մէջ կը գտնուին, էջ 628–659։ Թղթեայ, բարեկազմ և միջակիր գրչագիր մ՚է ԺԲ դարուն։ Բարսեղ կաթողիկոսին օրով օրինակուած է, որով՝ Մ. Գոշին ժամանակակից։ Աստուածաբանական, մատենագրական և լեզուական ընդարձակագոյն դիտողութիւններս ճառերուս նկատմամբ, պիտի գտնեն ընթերցողք թերթիս յաջորդ թիւերուն մէջ։

Առ այժմ իմ միակ մաղթանքս է, որ Ազգիս հոգեւոր դասակարգը՝ կարդայ և օգտուի ասոնցմէ, և մեր Ս. Հարց հոգւոյն ու շունչով սնանի, աճի և զարդարուի։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԽՐԱՏ ՈԳԵՇԱՀ

ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սկիզբն պատուիրանաց՝ երկիւղ Տեառն է. ըստ այնմ՝ Երկիւղիւ Տեառն ամենայն ոք խորշի ի չարէ։ Եւ, Սկիզբն զգօնութեան՝ երկիւղ Տեառն։ Եւ, Երանեալ է այր որ երկնչի ի Տեառնէ։ Ընդէր. զի ի պատուիրանս նորա նա կամի յոյժ։ Զի իբր յարմատաց՝ յերկիւղէ Տեառէն ամենայն պատուիրանք ընծիւղին։ Իսկ սուտկանողք երկիւղին՝ խոտորին յամենայն պատուիրանաց Տեառն, և վասն այնորիկ դատապարտին։ Որպէս Ադամ, և կէնն, և օձն, և Կայէն, և դարն Նոյի։ Սոդոմայեցիք և Գանանացիք և ոք յանապատին. և որպէս ի կատարածի՝ ի հուրն յաւիտենական։ Այլ պահողք պատուիրանացն հանդերձ երկիւղիւ, ժառանգորդք լինին արքայութեանն ընդ ամենայն սուրբս։

Բայց օրինակ երկիւղի Տեառն այսպիսի է. զի զնա միշտ մերձ տեսանիցես՝ որպէս և է, ի կալ, ի գնալ, ի ննջել, և յառնել, և յուտել, յըմպել. որպէս ասէ մարգարէն, Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ զի մի սասանեցայց։ Այսպիսի մտօք՝ անշարժ ի պատուիրանաց Տեառն լիցիս զօրհնապաղ։ Ի խոհականութեան, յողջախոհութեան, յարիւթեան, յարդարութեան. յաղօթս, ի սէր, ի բանս ճշմարտութեան, ի պահպնդութեան, ի ժուժկալութեան, ի խոնարհութեան, ի համբերութեան, յողորմութեան, ի քաղցրութեան, ի հեզութեան, ի հանդարտութեան, ի լռութեան, ի գթութեան, յարբանեկութեան, ի հիւրասիրութեան, յաստուածասիրութեան. ի հաւատս, ի յոյս, յերկայնմտութեան, յուսումնասիրութեան, յընթերցասիրութեան, և բնաւին յամենայն արդարութեան, զոր միանգամ երկիւղ ուսուցանէ։

Զգոյշ լեր անձին քում սրբութեան. զի գլուխ քահանայութեան եւ կրօնաւորութեան քո՝ սրբութիւնն է։ Զի գրեալ է, Սուրբ եղէք՝ զի ես սուրբ եմ Տէր Աստուած ի միջի ձերում։ Մի տացես տեղի ամենեին ապտեղութեան խորհրդոց. արեամբ չափ ընդդէմ կացցես արիաբար։ Զի թէ սակաւ ինչ մուտ գտանիցէ՝ բազմանայ ի վերայ քո մտածութիւն չարութեան, և խաւարեցուցանէ զոգի քո օր ըստ օրէ, և վարէ զքեզ ի գործն դարշութեան։ Պահեա զաչսդ ի տեսանելոյ՝ որպէս պատուիրեաց Տէր։ Զձառս կանանց ապտեղութեան մի լսեր բնաւ։

Մի սատանար քեզ ինցանէ մայրագիրս և քոյրագիրս, կովկիթս և սպասաւորս. ապա թէ ոչ՝ ունիս սատանալ և կնագիրս։ Եւ մի առ ազգականս յաձախեր երթալ, զի մի պատճառ քեզ կործանման լիցեն։ Սակայ սակայ յաղօթս կացցես հանդերձ զղջմամբ և արտասուօք յամենայն ժամանակի։ ԶԱստուած միշտ ի մտի պահիցես, և զյիշատակ սիրոյ նորա յոգի քո հաստատեսցես։ Եւ պահօք զանձնդ ամրացուցանիցես։ Միս մի ուտիցես՝ բայց եթէ հիւանդանայցես կամ ծերանայցես. սակայն զնպատակն մինչեւ ի մահ պահիցես։ Գինի՝ մի բնաւին, բայց եթէ ճաշակիցես և զԱրարիչն օրհնիցես, և կամ ի բժշկութիւն վարիցես. սակաւ՝ հանդերձ երկիւղիւ։ Ցիշեցես զորդիսն Ահարոնի և ընդհրոյն կիզումն, և այսպէս ամենեւիմբք զցանկութիւն շիջուցցես։ Ապա թէ յաղթիս ի ցանկութենէ խորհրդոք՝ մի թաքուցաներ, յայտնեա խոստովանութեամբ, և այնպէս

digitised by A.R.A.R.@

ազատեցեալ։ Այլ եթէ ծածկեցեալ
և անմաքուր ի խորհուրդն մերձե-
նայցես, գիտասցիր՝ զի յաւիտենից
կորնչելոց ես։ Նա, և նոյն ինքն
խորհուրդքն այնպէս գիւրաւ չի-
նանի յորժամ յայտնեցեալ. ապա
թէ ծածկեցեալ՝ իբրեւ հուր ընդ
յարդիւ, առաւել բորբոքի։ Յոր-
ժամ կարի սակաւ խորհուրդն զազ-
րութեան, ընդ միա ած զամօթ յա-
ւիտենական և զտանջանսն մշտնջ-
ենաւոր և զնախատինս մարդեան,
և այնպէս չինանի։ Բորբոքումն սի-
րոյն Աստուծոյ առաւել չինջուցանէ։

Սովորութիւն ընդունելութեան
առ մանկունս մի կալցես, և մի
առ նմանակեցս քո։ Մի խօսիցես և
մի ծիծաղիցես ընդ նոսա, զի մի ի
փորձութիւն սատանայի անկանի-
ցես։ Զեռն ամենեւին ի նոսա մի տա-
նիցես, և ոչ ըստ միոյ պատճառի.
բայց եթէ հարկ իցէ վարոցաւ խը-
րատել ի դիպող ժամանակի։ Թող
զհաց մինչդեռ քեզ պիտիցի, նոյն-
պէս և զջուր, և մի յագիր քնով.
զի սոքա զախտս պարարեն և զմիտս
խաւարեցուցանեն։ Մի սիրեր զգե-
ղեցկութիւն հանդերձի և ոչ զմիոյ.
զի նիւթ են սոքա խորհրդոցն պոռ-
նկութեան, և փառասիրութեան,
և սնափառութեան։

Յաներկիւղս և յարհամարհիչս
պատուիրանի Տեառն, և ի զաղրա-
խոսս՝ մի յարիցես, զի մի զմիտս
քո ապականիցեն։ Մերձաւոր լիր
դու ծերոց և երկիւղածից Աստու-
ծոյ, և սպասաւորեա նոցա, զի շա-
հիցիս ի նոցանէ խրատուս։

Ի ձեռին քո կալցես զգիրս սուրբ-
բըս՝ և ի նոցանէ խրատիցես, մա-
նաւանդ՝ զվարս հարանցն սրբոց։
Ուսցիս եթէ զիարդ զերիտասար-
դութիւն թառամեցուցին Ճգնու-
թեամբ, և սուրբ տաճար եղեն Ա-
ստուծոյ, և ժառանգորդք արքա-
յութեան։

Դատարկակեաց մի լիցիս, զի ի
նմանէ առաւել զօրանայ խորհուրդն
չարութեան։ Բաժանեա զօրն քեզ՝
ի գործ, յաղօթս և յընթերցումն։
Յաղօթս կացցես յառաւօտու՝ և մի
ծուլացցիս ի քուն, և ի միջօրէի,
և յերեկոյ՝ ի քնոյն։ Զայդ սովո-
րութիւն կալցես առաւել քան ըզ-
հասարակաց կարգն։ Եւ այսպէս
աղօթիցես։ Նախ օրհնիցես զԱ-
ստուած որչափ և գիտիցես, և ապա
խնդրիցես՝ նախ զհոգեւորն և ապա
զմարմնաւորն, և ապա գոհանայցես։
Բայց յառաջ քան զամենայն՝ հա-
սարակաց աղօթիցես, և ապա անձին
քուսմ՝ բազում խոնարհութեամբ։
Մաքրիցես զմիտսդ յոխակալութե-
նէ, յատելութենէ։ Ի մախանաց, ի
նախանձուէ, ի փառասիրութենէ։
Ի մարդահաճութենէ, ի սնափա-
ռութենէ, ի բաւասիրութենէ։ Ի
բամբասանաց, ի չարախօսութենէ,
ի թշնամութենէ, յամբարտաւա-
նութենէ, յամբարշաւաճութենէ։
Յանձնասիրութենէ, ի կեղծաւորու-
թենէ, և յամենայնէ յայսպիսեացս՝
զի աղօթքն քո սուրբ եղանիցեն։
Գիտասցիր, զի թէ թշնամեաց քոց
չար լինիցէ աղօթիցես՝ ոչ լսէ Ա-
ստուած, և առաւել զայրանայ ի վե-
րայ քո և դատապարտէ։ Նախ թող-
ցես յանցաւորին քուսմ, և աղօթիցես
զարժանն, և ապա քոյոց յանցա-
նացն խնդրիցես թողութիւն։

Սրբեա զքեզ յամենայն ապտհու-
թեան օրինակէ։ Մի սիրեր և ոչ զմի
ինչ զնիւթ՝ թէեւ հարկաւորաբար
ստանայցես։ Եւ թէ պատահի առ-
նուլ զինչս քո ի քէն՝ մի տրամիր
բայց ընդ հոգւոյ սակաւ պակա-
սութեան՝ մեծապէս սուգ կալցես.
բաւական համարեսցիր զհանդերձ
և զկերակուր։ Զտէր ստացիր քեզ
փարթամութիւն՝ և սպասաւորեա
նմա զգուշութեամբ, և ամենայն
ինչ յաւելցի քեզ։ Մի լիներ ըն-
չաժողով, և մի որսար զմեղուս. այլ
լեր դու խմաստուն մեղու Քրիս-
տոսի, և յոգի քո ամբարեա զպատ-
ուիրանս նորա, զի Ոչ կարես երբ-
կուց տերանց ծառայել։ Ապա թէ
պարզաբար ոք իցես՝ չափով զհար-
կաւորն ստացիր, զի մի յերանելի
աղքատութենէն վրիպիցիս։ Եւ եթէ
սիրես զստանալն՝ մի վասն քո, այլ
վասն եղբարց մատակարարութեան։
Սիրեա զողորմութիւն ըստ գոյն
քո, և տուր կարօտելոյն յամենայն
ընչից քոց։ Մի համարիր զինչս քո
քեզ՝ այլ Աստուծոյ, և զքեզ՝ ըս-
պասաւոր։ Անդաքան է քո՝ որքան
և այլոց։ Ապա թէ այսպիսի մոգք
չիցես՝ գիտասջիր, զի ի դատաստան
ագահից անկանելոց ես։ Տուր կա-
րօտելոյն ի յարկէն, ի հանդերձէն,
ի կերակրէն և յըմբելոյն։

Մի ապաստան լիցիս ի կրօնա-
ւորութիւն քո, զի մի նման յիմար
կուսիցն յառագաստէն արտաքս ան-
կանիցիս։ Ջանասջիր սիրել զընտա-
նիս որչափ զօտարս՝ թէ բարեպաշտք
իցեն. ապա թէ չարք և աներկիւղք
իցեն, ամենեւին հրաժարեաց։ Զան-
ձըն քո ամբողջ պահեա։ Եթէ կա-
րող իցես՝ ձեռն տուր քոյոցն հոգե-
ւորապէս, ապա թէ չիցես կարող,

այլ և ինասիցիս, փախիր ի նոցանէ՝
և բնակեա ուր օգուտն քո է։

Խոնարհամիտ լեր առ ամենեսեան. առ մեծամեծս և փոքունս։
Սպասաւորեա ծերոց խոնարհութեամբ և մի ամբարտաւանիր։ Հնա-
գանդ լեր ուսուցչին քո մինչ ի մահ.
և զամենայն ինչ ըստ խրատու ծե-
րոց առնիցես։ Զկամս քո ամենեւին
ուրացիր։ Զքեզ քան զամենայն ոք
յետին և անարժան համարեսջիր։
Մի պարծիր ի հնորհս ինչ քո, զի
ամենայն Աստուծոյ է։ Յակոտ մի
ուսանիցես՝ այլ հեզութեամբ և հան-
դարտութեամբ զամենայն ինչ առ-
նիցես։ Շէ և քէ և նզ՝ բնաւ մի ու-
մեք ասիցես, զի մեծ պատուէր է
ի Գրոց վասն այդոցիկ։ Ապա թէ
յայդոսիկ սովորիցիս՝ ի բաց կաց-
ցես ի քահանայագործելոյ։

Վրէժխնդիր տրամէցուցչին քո
մի լիներ, այլ ջանասջիր բարիս
նոցա առնել՝ զի մեծ համարձակու-
թիւն կալցիս առ Աստուած։ Զա-
տելիս քո մի ատեր, բայց զատելիս
Տեառն ատեա առաւել։ Ի բազմա-
կանս՝ գահասէր մի լիներ, այլ զա-
մենեսեան առաւել մեծարեա քան
զքեզ։ Ծաղրասէր մի լիներ, և մի
զբօսասէր, և մի զրոյցասէր. զի
դոքա ամենեքեան վատիէք են շը-
նորհացն Աստուծոյ։ Մի զոք յա-
կանէ խոտեր այպանելով, զի մի և
դու խոտիցիս ի Տեառնէ։

Զկաղ, և զկոյր և զնման սոցա մի
զզուեր, զի մի զայրացցի Արարիչն։
Զաղքատն յորժամ տեսանիցես՝
յիշեա զՏէր եւ զաղքատութիւն
նորա վասն քո, և ջանա հաղորդել
նմա։ Բարի գործել՝ մի պատահ-
մամբ առնիցես միայն, այլ և փոյթ
կալցիս հոգաբարձութեամբ առ-
նել։ Ի տուրսն զուարթատես լեր,
զի մի փոխանակ ցորենոյ՝ եղէգ
բուսցի քեզ։ Ի սէր անկեղծաւոր
լեր, և ի բան՝ ճշմարիտ։ Ի հաւա-
ստս անյողդոդ, ի յոյս՝ աներկբայ։
Եւ այդոբիւք՝ գիւրի քեզ ամենայն
առաքինութեան ճանապարհք։

Մինչ սուգ կալցիս յանձին
քուսմ, և սիրիցես զարտասուս. զի
դոքա են նշանակ սիրոյ Աստուծոյ։
Սակայն, թէեւ աղբիւրս արտա-
սուց ունիցիս՝ մի հպարտանար, զի
այն չնորհք յԱստուծոյ են։ Սիրեա
զսալ քան զառնուլ. զպատուել՝
քան զպատուիլ. զյուսանել՝ քան
զյուսուցանել։ Որչափ ի մարմնի
ես՝ կարօտ ես ուսման։ Ծոյլ և թոյլ
և լքեալ մի լիցիս, զի մայր ամե-
նայն չարեաց՝ պղերգութիւն է։

Ի տեղի աղօթից զգաստ լիցիս,
մի միայն մարմնով՝ այլ և հոգւով։
Սիրեա զաւուրս ոտնից, մի վասն
կերակրոյ՝ այլ վասն խորհրդոյն որ
ի նոսա։ Խօսեա, զի լուռ բնաւ
չվայելէ, այլ զոր ինչ արժանն է.
սակայն մանկան՝ ըստ հարցմանն
պատասխանելն է գովելի։ Մի զաչ-
սրդ զվայրով ածիցես, և մի զմիտսդ
ցնդիցիս, զի մի մոլորիցիս։ Մատո
զոնկդ ի խրատս, և զխորհուրդսդ՝ ի
քննութիւն, և ընտրեա զօգուտն ի
նոցանէ։

Ի վայր կալ զաչսդ, և ի վեր
զմիտսդ՝ զի միշտ ընդ Աստուծոյ
խօսիցիս։ Յիշեա զԱստուած ընդ
տուրբեւառութիւն շնչոյդ՝ թէ հնար
է, զի նովաւ ապրիցիս ի խաղբից
սատանայի։ Մինչ մանուկ ես՝ սիրեա
զառաքինութիւն և գործեա զնո-
սա, զի մի յորժամ ծերացիս ա-
պաշաւիցես։ Զի ծերութիւն՝ սակա-
ւութեան է, եւ ոչ Ճգնութեան։
Յաղթեա որկորսութեան դիւին՝
պահօք, և պտղակութեանն՝ ա-
տուածիրութեամբ, և արծաթսի-
րութեանն՝ ողորմութեամբ, և
արամութեանն՝ անընչութեամբ, և
բարկութեանն՝ հեզութեամբ, և
ճանձրութեանն՝ արութեամբ, և
ամբարտաւանութեանն՝ խոնարհու-
թեամբ, և ամբարշաւաճութեանն՝
անարգախոհութեամբ, եւ ամենե-
ցունց՝ աղօթիւք։ Ստացիր զաղօթս
արտասուօք. և զխոնարհութիւն և
զանապատ և զաշխատութիւն, և
սիրեա ամենայն ախտից։

Մայր բարեաց առաքինութեան՝
է խոնարհութիւն, և հիմն Ճգնու-
թեանց՝ է համբերութիւն։ Կատա-
րած առաքինութեան՝ է սէր, և
սկիզբն՝ երկիւղ. բայց ստացումն
սոցա՝ է յոժարութիւն կատարեալ։
Բուծանէ զմանկութիւն՝ ունկըն-
դրութիւն, և ուղղէ զառաքինու-
թիւն՝ պարզմտութիւն, և ստանայ
զսոսա՝ որ հաւատայ ամենայնի։ Եթէ
կամիս մեծ լինել՝ խոնարհ լեր։ Եւ
եթէ կամիս յառաքինութիւն հա-
սանել՝ հրաժարեա որ ինչ երկրա-
ւոր։ Առաւել քան զամենայն՝ ստա-
ցիր զընտրողութիւն։ Զչափ անձին
քո ծանիր յամենայն իրս, և այն է
իմաստութիւն։

Զոր ինչ սիրելիս՝ բժշկեա խոս-
տովանութեամբ. զիւրաքանչիւրն
յայտնեա ճշմարտութեամբ և մի
թագուցաներ։ Զերազատութիւն
բազմօրինակ ճշդութեամբ ցոյց. և
զիւրաքանչիւր սահմանեալ կարգն՝
կատարեա աղօթիւք։ Եթէ տունջեան

digitised by A.R.A.R.@

ախտացար խորհրդովք՝ և այնպէս փորձէցար. եթէ ի հին ծանօթից տեսար, եթէ ի նորոց՝ յաղագաւոհմէ, եթէ յօտարաց: Արտաքոյ թէ իգական, անանական՝ թէ այլ ինչ կերպարան: Տեսութեամբ թէ շօշափմամբ. խառնակութեամբ, շաղախմամբ՝ թէ ի խորհուրդն նկարելով: Ի գրաստ արշաւելով, եթէ ի խառնակս ինչ հայելով: Մերկ զանձն տեսանելով, թէ զօտարս: Ի պարս կանանց, եթէ ի ժողովս խառնակս: Ի հարսանիս, եթէ ի տուն սգոյ: Ի լուրս բանից, եթէ ի ճառս ազատելիս: Ի հոտս անուշս, եթէ ի հոտս զազիրս: Գործոց կատարմամբ, եթէ անգամոց պատրանաք: Ժամանակաւ հոսմամբ, եթէ տունջիան գրգռմամբ: Գիշերութեամբ, եթէ վիժմամբ: Ցվիրութեամբ կերակրոյ, եթէ լրութեամբ ջրոյ: Յաշխատութեանց՝ եթէ ի հիւանդութեանց: Կամաց յօժարութեամբ՝ թէ ակամայ ընդդիմութեամբ: Հաւատացեալ՝ եթէ անհաւատ երեւոյթն եղեւ: Ի՞նչն յուզեաց զմոլորութեան տեսիլս, թէ յայլոց կերպարանեալ ըմբռնեցաւ: Զայս ամենայն և որ ասցին նման, հարկաւոր է մանաւորաբար պատմել հօր խոստովանութեանն: Զի գիւրին է գիւին զանազան կերպարանել:

Բայց դու զդայշ լեր, մի յարթնութեան ինչ ազատեսցես՝ զի մի յանուրջս նովիմբ փորձեցիս: Զի ատա միայն ունիս զառաւելութեան կարգն, իսկ այլն ամենայն՝ մի օրինակ քեզ եղիցի: Սակայն վասն առաւել զգուշութեան իբրեն գիպուածոյ, աւելի ինչ կրեալ զկարգն արժան է, զի մի ի տեսիլս զանազանս ախտացիս ինչ: Եւ մի միայն զցանկութեան գիպուածն խոստովանիցես և զայլոց ախտից անփոյթ առնիցես. զի մի՝ մատն է յայլոց մատանց: Այլ խոստովանեա, թէ բանիւք յանցեար, և թէ խորհրդոք: Զկամայ և զակամայ: Զգիտութեան և զանգիտութեան: Զցասման, զանգէպ երկիւղի, զանբան արամութեան: Զծուլութեան, զորկորսութեան, զդատարկութեան, զանչափութեան քնոյ: Զամբարտաւանութիւն, զնախանձ չար, զատելութիւն, զմախանտ: Զկեղծաւորութիւն, զշղմոդութիւն, զնտապարծութիւն, զնեփաքաութիւն, զլեկդկատակութիւն, զդատարկաբանութիւն. մինդամայն զամենայն ախտս հոգւոյ և մարմնոյ:

Եւ ջանասջիր զի մի չար ինչ սովորութիւն ջարին ի քեզ մնասցէ: Ապա թէ ոչ՝ իբր խոր զբաղում առաքինութեանց զանգուածն խըմբէ: Զի թէ ընդ մի կապանաք անկար ախտի՝ ծառայ եղեր ամենայն ախտի: Որպիսի ինչ, զի թէ յաղթեցեր ցանկութեան և յաղթեցար յագահութենէ, յաղթեցար իբր յամենայնէ: Զի ի լուծանել միոյն՝ ոչ կարես ամբողջ և զայլսն պահել, և ժառանգ լինել արքայութեանն: Զի ագահն լուծանէ զսէր, զգլուխ ամենայն օրինաց, և նովաւ զամենայն պատուիրանս: Այդպիսի խմա և զայլն ամենայն: Զի որպէս հարկաւոր է բազում անգամք մարմնոյ, հարկաւոր է և բազում օրէնք հոգւոյ: Զի թէ ոչ էին ամենայն հարկաւոր, թերեւս ոչ ամենայն իսկ գրէին: Եւ թէ պատուէս զուտիչ օրինացն յոմանս զոր առնես, ապա անպատուէս զնա յայնոսիկ զոր ոչ առնես. և յաղագս այնորիկ դատապարտես:

Յամենայն ժամանակի պարապան տես զքեզ օրինացն Աստուծոյ: Թէ առնիցես՝ Ծառայք անպիտանք եմք յիշեսցես, զի թերեւս զղջմամբն ապրեսցիս: Զի որպէս կատարմամբն և խոնարհութեամբն յամբարտաւանութենէ ապրիցես, նոյնպէս զղջմամբն զթերին լցցես: Եւ զԱստուծոյ զպարտապան ըզշնորհն հատուցցես:

Զօր մահուն հանապազ ի մտի քո կալցես, զի այնպէս զկարճմոութիւնն հատցես: Ի գիշերի և ի տուէ խորհիցես զի համար տալոց ես ընդ ամենայնի, և այնպէս երկիւղն ի սիրտ քո անկցի, և նովաւ յամենայն պատուիրանս Տեառն լիցես:

Զամենեսեան սիրեսջիր յորոց ոչ վնասեսցես. և յորոց վնասես՝ խորհեսջիր. սակայն աղօթեա վասն փըրկութեան նոցա:

Ի բանս՝ հակառակասէր մի լինիր զքոյն հաստատելով: Թէեւ ճշմարիտ էցես, ի սկզբանն տեղի տուր, և ի դադարել հակառակութենէն՝ ցոյց զքո ճշմարիտն, թէ ընդունին. ապա թէ ոչ՝ մի ինչ տրտիր:

Մի հաւատար վարուց քոց մինչեւ յօր եղի քո յաշխարհէ: Զի որքան ի նաւարկութեան ես՝ երկիւղ է նաւաբեկութեան:

Մի ուխտեր ինչ Աստուծոյ վաղվաղակի անընտրողաբար, զի մի զըզջասցես և ուխտազանց գտանիցես: Ապա թէ ի նեղութեան ուխտեցեր՝ փութա կատարել:

Մի խոստանար տալ ընկերի քո զոր ոչ կարես, այլ տուր զոր կարես: Եւ մի խոստանար՝ զի մի պատճառ առելութեան լիցի:

Որ երէց քան զքեզ լիցէ նմա տուր զբաղմականն, զբան, զխորհուրդ, և զայլն ամենայն. ապա թէ տգէտ ոք լիցէ՝ ծածկաբար ծանոյ զարժանն, և զքեզ մի երևեցուցանել ջանասցես: Մի խօսիր սուտ ընկերի քո, և մի դաւաճաներ զնա, զի մի և դու անկցիս ի գուբ:

Մի տար տեղի աշխարհականաց գայթակղութեան և ոչ մոյ իրի, ապա թէ ոչ՝ դատապարտիս ի Տեառնէ: Տուրեւառութիւն վաճառի, շահի վասն՝ ընդ աշխարհականս մի առներ. ապա թէ առնիցես՝ տուր առաւել՝ և առ սակաւ:

Մի օթիցես յաշխարհ գիշերի, մանաւանդ միայն. բայց եթէ հարկ լիցէ՝ ընդ այլ եղբարս, և կամ առքահանայի:

Տրանջող մի լիցիս առաւել՝ վասն կերակրոյ, զի մի նմանիցիս որոց յանապատն: Զխորհուրդ ուրուք քեզ յայտնեալ՝ այլ ումեք մի ասեր, զի մի անհաւատարիմ լիցիս: Մանրակծիծ մի լիցիս, զի մի զմեծամեծսն առցես: Երդումն, և ոչ սակաւ՝ մի երդնուցուս, զի մի և զմեծամեծսն ուսցիս: Հասուխած՝ մի սովորիցիս, զի մի նմանեսցիս առնանոց: Ընդ ումեք որ մերձ լիցես՝ առանձին ինչ մի ստանար, զի մի երկպառակ երևեսցիս:

Սէր հաւատարիմ կալցիս առ ամենեսին, ապա թէ պատճառաւ լիցէ՝ դիւրաւ լուծանի: Ընդ ում որ բնակիցիս, որքան երկիցես և օգտիցիս՝ կացցես. ապա թէ արհամարհել սկսանիցիս՝ մի կացցես: Ցիւրաքանչիւր աւուր հանգիս առնիցես մտաց քոց և ի ժամու, և ուղղիցես զսխալեալն բազում փութով. և այնպէս կարիցես Տեառն հաճոյ լինել և ժառանգել զարքայութիւնն: Շնորհօք և մարգասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և:

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ

ՔԱՂԵ ԽՐԱՏՈՒ

ՎԱՍՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ՍՊԱՍԱՒՈՐԵԼ

ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՌՆ

Գլուխ ամենայն բարեաց Տեառն առ մեզ եղեալ՝ է հաղորդութիւն Մարմնոյ և Արեան իւրոյ սրբոյ. և վասն այնորիկ հարկաւոր է սակաւ ինչ գրել, թէ որպէս արժան է սպասաւորել անձառ խորհրդոյն պաշտօնեայքդ Եկեղեցւոյ:

Բայց գիտել պարտ է զի զանազան ոգւով և մարմնով ինդրէ մեծ խորհուրդն: Զի թէ ըստ օրինակին այնպիսի էր, որչափ ըստ ճշմարտութեանն: Քանզի կաղ և կոյր և ամենայն արատաւոր՝ ի պատարագն անընդունելիք էին. և այնոքիկ օրինակք էին ոգւոց անարատութեան: Նա՝ և ոչ անկատար մարմնով հաճոյ է Աստուծոյ: Զի ըստ օրինացն՝ քան, քսանեւհինգամենից ի վեր և ոչ ի խոնարհ հրամայէ կարգել ի քահանայութիւն: Զի թէպէտ անարատ, չար է խակութեամբ թերի գտանել ի պաշտօնն: Զի գերազանցութեամբ բարեաց զարդարել է գէպ է քահանայից՝ և ոչ հասարակութեամբ: Որպէս զի առ այլս նորին բարին լցէ, և ոչ իւր միայնոյ, զի այնորիկ ազգաւ կարգեալ է՝ զի մատակարար ուղղութեան լցէ որոց ընդ ձեռամբ: Ապա թէ անկատար լցէ ոգւոյն առաքինութեամբ և մարմնոյն հասակաւ՝ բազում է չարեաց տեսակ: Մի, զի ինքեան ի գտատպարութիւն է և տեսողաց ի գայթակղութիւն: Եւ գարձեալ՝ զի զբարկութիւնն Աստուծոյ չարժէ յաշխարհ, և խափանումն լինի փրկական խորհրդոյն: Զի որ ոչ իցէ ինքեան բարի՝ զիարդ այլոց: Քանզի ի խաւարէ լոյս ոչ է, և ոչ ի հիւանդութենէ առողջութիւն, և ոչ

digitised by A.R.A.R.@

յաղքատութենէ փարթամութիւն։ Նմանապէս, և ոչ ի չարէ՝ բարի։ Եթէ զդուշնաքեայ զգործս անմարթ դոն կատարել՝ յաղագս անվարժութեան և հասակին թերութեան, զիարդ զմեծագոյնն գործ։ Եթէ զհասարակականն խօսս ոչ գիտեն ասել առ ոմանս, որպէս ընդ Աստուծոյ խօսին։ Եթէ հայցել ի մարդկանէ ոչ գիտեն ըստ արժանւոյն՝ սակաւ ըստ պիտոյիցն՝ որպիսի յեղանակաւ յահաւորէն Աստուծոյ խնդրիցեն զոգւոց փրկութիւն։ Եթէ ի տեսողաց խոտին՝ յառնել, ի նըստել, ի կալ և ի գնալ, և այն ի համազգեաց, որչափ և ի հրեղինաց սպասաւորաց աստուածային խորհրդոյն։ Եւ եթէ զմարմնական կենդանուն անկարգաբար ուտեն, բազում անգամ և ծիծաղելի համասեղանից, ըստ որոմ օրինակի զհոգեւորականն և զերկնայինն գիտիցեն ուտել զկերակուր։ Եթէ զինքեանց զաջ և զահեակ ընտրել ոչ կարեն, զորոց արդեօք ընտրիցեն զօգուտ։ Արդարեւ յոյժ զարմանալ ի դէպ է, ոչ ընդ նոսա՝ զի դիւրաստեղծ են ոգւով և ի կամս ուղղըչացն հային, այլ ընդ կարգողս ընդ մեզ, եթէ զիարդ հաւատամք զանձառ խորհուրդն ի ձեռս նոցա, և ընդ նոսա՝ և առաջին եւս դասապարտիմք։

Եւ զի մի զայս կրիցեմք, զգուշութեամբ զանձինս և զնոսա զարդարեսցուք, և ամենայն ուղղութեամբ կատարեալ կերպարանեսցուք։ Ըստ Տեառն Նմանութեան զոր ասէն Առաքեալ. Մատոյց զանձըն անարատ պատարագ, պարտի զանբծութիւն ուղղել նուիրեալն ի քահանայութիւն։ Զի սովիմբ վկայեցան առաջինքն՝ որք զանձինս Տեառն նուիրեցին, Նոյ և Յոբ՝ և այլք նմանք նոցա։ Սկսանել յերկիւղէ՝ և ըստ կարգի պատուիրանացն, հանդերձ մաքրութեամբ՝ ժամանել մինչեւ ի գլուխ պատուիրանին՝ ի սէրն։ Եւ ամենեքումբք յարդարել և այնպէս համարձակիլ, մանաւանդ սրբութեամբ։ Զի նովաւ առաւել ընդ Տեառն սրբութեանն յարմարիմք, զի նախ սրբիլ՝ և ապա ի Սուրբն մերձենալ օրէնքն ուսուցանեն։ Զի ոչ է միաբանութիւն մաքրութեան եւ անմաքրութեան, որպէս լուսոյ և խաւարի։

Սակայն առաւել սիրոյն կատարելութեամբ ձեւանալի է։ Քանզի նովաւ և Տէրն զիւրն կատարեաց Խորհուրդ։ Ապա թէ ատելութեամբ և մախանօք ընդ բազումս լիցէ, որպէս կարիցէ Ճշմարիտ Սիրոյն անօթ լինել, և զմարդասիրութիւն նորա յայլս ճառագայթել։ Զի դէմք հակառակին է ատելութիւնն և նըմանք նորին, որպէս սէր՝ կատարեալ պատկեր և նմանութիւն Տեառն։ Եւ զի քահանայութեան Տեառն նշանակ է և մերս քահանայութիւն, ոչ վայելէ զՃշմարտութիւն նուազել քան զստուերն, ըստ որում գրեցաւն, Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։ Իսկ Տէր՝ և զանձն եդ, և հրամայեաց դնել, և աշակերտութեան նշանակ՝ զնոյն եցոյց։

Յայտնի և համառօտ օրինակ սիրոյն՝ է հրամանն Տեառն. Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք և դուք նոցա. զի այն իսկ են օրէնք և մարգարէք։ Յայտնանէ ուսաւ Առաքեալ, ասել, Լրումն օրինացն՝ է սէր։ Եւ այլուր, Մեծ քան զսուտա՝ սէր է։ Եւ դարձեալ, Զհետ երթայք սիրոյ. և զի, Սէր ընկերի չար ոչ առնէ. Սէր ոչ նախանձի, և այլն։ Զայն իսկ եցոյց զԴաւթայն և զՅոնաթանայն, զի սիրապէս սէր՝ ոչ անկանի բնաւ։ Վասն այնորիկ իսկ տուաւ, զի զամենեսեան ի մի յարմարեալ կապիցէ, և զարմատ չարեաց հատցէ, և երկայնամիտ ի վերայ նուազելոյն լիցի, և անոխակալ առ մեղուցեալսըն։ Զի եթէ ի պարզաբար ալօթեն հրամայեաց թողուլ զյանցանըս՝ և ապա ալօթել, թող, ասէ, զյանցանս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Որոմ ներման արժանացին որք ոխակալութեամբ յանդգնին յահաւոր Խորհուրդն։ Ցիշեսցեն և զստակ պարտապանացն, որք ոչ ունէին հատուցանել՝ և շնորհեաց։ Զի և այնքան եցոյց զդժնդակութիւն չարին մախանաց և ատելութեան, որպէս զի և ի սեղանոյն հրամայեաց երթալ և հաշտիլ։

Արդ սիրեա՛ հասարակ զամենեսեան՝ որքան հնար է, և ի միասողաց հրաժարեա՛ վասն զգուշութեան՝ բայց մի ատեր։ Եւ զարժանաւորսն պատուեա՛ առաւել։ Այսոքիւք բարեշուք լիցես, ըստ որում գրեալն է՝ Քահանայք քո զգեցցին զարդարութիւն։ Ի վերայ այսորիկ ուսուսմնասէր լինել՝ որով արիութիւնն յարդարի, և բարեկարգ լիցես։ Զի իբր արուեստականի գործիք են պէսպէս ուսմունք, որովք մարթ է լինել արուեստին, որպէս զի որք ոչ ունին՝ ոչ կարեն գործել։ Անխափան կատարեա զպաշտօնն տունջեան եւ գիշերուոյ։ Եւ յորժամ հանդերձեսցիս մատչել ի սեղանն սրբութեամբ և կատարել զսէրուն նական խորհուրդն, մի ի պատճառս ադահութեան առնիցես զձրի փըրկութիւնն աշխարհի։ Զի և մեք ի Տեառնէ ոչ փոխարէն առաք, այլ պարգեւս։ Եթէ ամենահաճոյ առնիցես Տեառն, զպէտս քո յայնմանէ առնուցուս, Զի պաշտօնեայք սեղանոյն՝ ի սեղանոյ անտի վայելեն։ Իսկ զառաւելեալն՝ յաղքատս ծախիցես։

Եւ մի առնիցես փառասիրութեամբ, արհամարհելով զփառս Աստուծոյ, զի մի անարգիցիս յԱստուծոյ։ Եւ մի մարդահաճութեամբ, զի Տէր ցրուէ զոսկերս մարդահաճոյից։ Եւ մի յաւուրս տօնից սեթեւեթեալ արիասցիս, և յայլ աւուրս հեղգացեալ՝ անփոյթ առնիցես։ Եւ մի յաւուրս ագապից յափշտակիցես զառաջին պատիւն՝ շահի վասն և մեծարանաց միանգամայն, զի մի իբր ամենայնիւ ախտաւոր լիցիս։ Այլ յամենայն ժամանակի՝ մի դիտաւորութիւն քեզ լիցի, կամացն Աստուծոյ հաճոյութիւնն։ Եւ զանձն քո զարդարիցես ըստ նմանութեան պատմուճանին Ահարոնի՝ արդարութեամբ։ Եւ անխոցոտելի լիցիս յամենայն ախտէ, մանաւանդ ի դիւէն պոռնկութեան։ Եւ եթէ կրիցես ինչ ի ցանկութենէ յարթենութեան և թէ ի քուն, սրբիցիս նախ՝ և ապա ի սրբութենէն մատիցես։ Զնոյն և յայլ ախտից սրբիցիս և ապա համարձակիցիս։ Զի անտեղի է ի մի յախտից զգուշանալ՝ և յայլսն ոչ։ Որպէս զբազումս տեսանեմք, զի զնախանձ և զմախանս՝ զմայրն մահու, և զատելութիւն և զայլ ամենայն ախտս, զհոգւոյ և զմարմնոյ՝ անխտրաբար ունին, ի մի միայնէն պիտակաբար զգուշացեալք յերազափորձութիւնս, որովք մանաւանդ դատապարտին քան թէ պատուին։

Բայց օրինակ մաքրութեանն կարգաք յերազափորձութիւնսն՝ այսպիսի է, ըստ որում գրեցաւս. քանզի բազմօրինակ է։ Զի է ըստ բնութեան կրից, և է ըստ կամաց մերոց յորդորման, և է ըստ դիւաց պատրանաց։ Եւ այսոքիկ դարձեալ զանազան. ուստի որոշին ի միմեանց կարգաք։

Եւ ըստ բնութեան կրիցէ՝ յորժամ առաւելեալն արտաքս հոսի։ Եւ դարձեալ ի ճգնութենէ և յաշխատութենէ և ի հիւանդութենէ պատահի։ Եթէ յառաջ քան զգիշերապաշտօնն լինի՝ զօրն արտաքոյ կացցէ, և վաղիւն պատարագեսցէ։ Հոմանն երկրորդ կարգ՝ գիշերութեանն. մի, յիսուն ծնրով։ Իսկ թէ յառաւօտու պատահի, մի ի վաղիւն՝ այլ ի միւս վաղիւն հաղորդեսցի. բայց թէ հարկ լիցի՝ հաղորդեսցի վաղիւն։ Իսկ եթէ տեսութեամբ իցէ օտարաց, յօրն արտաքոյ կացցէ և վաղիւն ի ներս, և ի միւս վաղիւն հաղորդեսցի. ապա թէ հարկ իցէ՝ հաղորդեսցի վաղիւն։ Իսկ եթէ յառաւօտու իցէ երրորդ կարգ տեսութիւնն, երրորդ օրն հաղորդեսցի։

Այլ թէ բուն մերձաւորաբ փորձեսցի ի սատանայէ, և՝ չէ յառաջ ախտացեալ՝ յերրորդ աւուրն պատարագեսցէ, ապա թէ չափաւոր ախտացեալ իցէ՝ հինգերորդ կանոնն։ Իսկ եթէ առաւել ախտացեալ իցէ տուընջեան մանաւանդ ժամանակաբ, և այնպէս փորձի, զշնութեան սահման ունի։ Թէ մի անգամ հանդիպի, երկու շաբաթ կրկին կարգաբ ապաշխարիցէ և ապա հաղորդիցի։ Եթէ կրկնի եւս՝ կրկնապատիկ ապաշխարիցէ։ Ապա թէ ախտացեալ սովորութիւն կալցէ՝ ի բաց կացցէ ամենեւիմբոի հաղորդելոյ, մինչեւ Ճշմարտապէս սրբեսցի, և ապա ի վարդապետաց ուղղեսցի։

Այդպէս եղիցի և օտար ծանօթից, եթէ հին. և եթէ այլ ընտանեացն՝ կարգաբ առաւել լիցի։ Ի գիշերի, և ի տունջեան և յառաւօտու՝ կարգաբ զանազանին։ Ապա թէ ի վերայ գրաստաու տեսանէ կամ զիսառնակս անասնոց՝ երեք կարգ. օրն արտաքոյ, վաղիւն ի ներքս, յերրորդին հաղորդեսցի։

Ապա թէ յեռ պատարագին ի տուընջեան, ոչ հեղգացեալ՝ փորձի օտար տեսութեամբ, կրկին կարգ. վեց օր արտաքոյ, մի՝ ի ներքս, և յութերորդն հաղորդեսցի։

Իսկ յանտես հոտումն և ի գիջութիւնն և յառաջագոյն ախտանալն, եթէ յօտարս և եթէ ի ծանօթըս թէ յընտանիս, յառաւելն և ի նուազն և ի հեղգալն՝ զանազանին կարգն, որպէս յառաջ գրեցան, զի ի վարդապետաց ուղղին։ Նոյնպէս և յայլ գիպուածսն փորձանաց։

Իսկ եթէ ի յոլով կերակրոց և յըմպելեաց լիցի, չորս կանոն. երեք օր արտաքոյ և մի ի ներքս, և ի հինգերորդն հաղորդեսցի։

digitised by A.R.A.R.@

Ապա թէ արուական ինչ լեցէ փորձանքն, և կամ անասնական, և կամ այլ ինչ այպիսի՝ և կամ այլ ազգի. թէ չունէր ինչ յառաջագոյն խոցուած տեսութեան և կամ խորհրդոց, օրն արտաքոյ՝ և վաղիւն ի ներքս, յերրորդն հաղորդեսցի: Ապա թէ ախտացեալ, նոյն սահման կացցէ՝ որպէս վասն այլ տեսութեան գրեցաւ: Յառաջ քան զգիշերին պաշտօնն, և յառաւօտուն և ի տունջեանն, պատարագեալ և անպատարագ, զանազանին կարգն:

Իսկ պատրաստել զնութ Մարմնոյ և Արեան Տեառն՝ այսպիսի է: Ի յընտիր և յաղնիւ ցորենոյ պարտ է զհացն սրբութեան կազմել, և ոչ վայրաբար յամենայնի: Եւ ի նշխարատան պահել սպասաւորաց եկեղեցւոյն: Բեկեալ և այրեալ և յերկիր անկեալ նշխարով՝ չէ պատարագ մատուցանել: Նոյնպէս զբաժակ պատարագին՝ քահանայք առանձին ամանով պահեսցեն, և սպասաւորք եկեղեցւոյն հոգասցեն, զի մի պատճառ ինչ լեցի:

Ապա թէ ոք մկնանկ գինով և կամ նշխարով յանգէտս պատարագ մատուցանէ, ամենայն ամանքն սրբութեան՝ յորս հասաւ պղծութիւնն, հանդերձ սկէծածկոցովն, բայց ի հանդերձից սեղանոցն՝ ի բաց խոտեսցին: Եւ քահանայքն երէք շաբաթս պահօք ապաշխարեցեն. երկու արտաքոյ՝ և մի ի ներքս, և ապա հաղորդեսցին սրբութեանն:

Իսկ թէ գիտութեամբ ոք մատուցանէ, առ ոսն հարկանել զանձառ խորհուրդն՝ ի կարգէն լուծցի: Բայց վարդապետք իշխանք են, որպէս կամին՝ արասցեն ըստ ապաշխարութեան նոցա. երէք ամ սրբապահութեամբ ի ներքս՝ և ապա հաղորդեսցին, այսպէս և կամ այնպէս՝ ի գիտութիւն վարդապետին թողեալ է: Իսկ ի դնել սպասուցն՝ մերձեցեալ մուկն արածիցէ ի նշխարն, և գիտացեալ քահանայն յսկզբանն՝ մինչեւ յայն տեղին որ առնու ըզհացն և զբաժակն և օրհնէ, փոխիցէ զնշխարն՝ և այլ դնիցէ, և յառաջն սկսեալ՝ կատարիցէ զպատարագն: Իսկ թէ յետ օրհնելոյն մինչ ի բաշխելն գիտացէ, խափանեսցէ զպատարագն: Թէ այլ ոք լիցի՝ ճաշակեսցէ զանկատար խորհուրդն, և երէք շաբաթ արտաքոյ կացցէ. ապա թէ ինքն լցէ՝ կերիցէ և մի թողցէ. քառասուն և ութ օր արտաքոյ կացցէ սրբութենէն:

Իսկ թէ ի մկրտելն և ի մատաւորելն գիտացէ՝ կատարեսցէ ըզխորհուրդ, և երէք շաբաթ արտաքոյ կացցէ սրբութենէն՝ և ապա հաղորդեսցի, և ամանքն մի խոտեսցին: Իսկ թէ գիտութեամբ ծուլացեալ և արհամարհանօք անհոգատնոյ, և մատուցանէ զպատարագն՝ ջերմեռանդն և սրբապահ ապաշխարութեամբ, մի ամ արտաքոյ կացցէ՝ և ապա հաղորդեսցի:

Իսկ թէ քացախ գինով առնիցէ յանգէտս, կրկին ապաշխարութեամբ, երէք շաբաթ արտաքոյ կացցէ՝ և ապա հաղորդեսցի:

Ապա թէ գիտութեամբ՝ ամ մի: Այլ թէ ջրով մատուցանէ յանգէտս, և մինչեւ ցբաշխումն, ուր և գիտացեալ, ի բաց թողցէ, և այլ մի մատուցցէ: Ապա թէ. ի բաշխելն գիտացցէ, կատարեսցէ զպատարագն՝ և ինքն ամ մի արտաքոյ կացցէ սրբութենէն, անխափան նովին կարգովն: Ապա թէ գիտութեամբ մատուցանէ՝ ի կարգէն լուծցի, և ապաշխարիցէ այն կարգաւն՝ որպէս կանոնք հրամայեն:

Ապա թէ երկօրեայ նշխար ոք մատուցանիցէ յանգէտս, երէք շաբաթ արտաքոյ կացցէ նովին կարգաւն: Ապա թէ գիտութեամբ ոք մատուցանէ, ծուլացեալ կամ գիտացեալ և ագահեալ, երէք քառասունս արտաքոյ կացցէ հաղորդութենէն, զերիս մասն արտաքոյ սրբութենէն, և զմի ամ ի ներքս. և ի կատարել Թուոցն և քսանեցն՝ մտեալ հաղորդեսցի: Իսկ թէ օթի ջրով ի պատճառս ծուլութեան կազմեաց զնշխարն, ութ օր արտաքոյ կացցէ հաղորդութենէն: Ապա թէ հարկաւ պահի հեռագոյն գոլով, որպէս ի ձմեռնային ժամանակի, և կամ յերկիւղէ աւազակաց՝ մի խափանեսցեն զպատարագն: Նոյնպէս թէ ձեամբ պատահեսցի՝ առցեն ի սուրբ տեղեաց, անսխալ է՝ թէ Աստուած կամի: Այլ թէ մասն անկանի ի սուրբ սեղանն, երէք կարգով ապաշխարեսցին. մի օր արտաքոյ կալով, և երկու օր ի ներքս՝ խորհրդոյն հաղորդեսցին: Իսկ եթէ յիսկէծածկոցն անդանիցի՝ մի խըսրիցի՝ անվնաս է:

Իսկ եթէ ի խոնարհ՝ առ ոսն սեղանոյն անկանիցի, ութ օր արտաքոյ կացցէ սրբութենէն, և երկու ի ներքս, և ապա հաղորդեսցի: Իսկ թէ ներքոյ բեմին անկանիցի՝ երկու ութեակս պահիցէ:

Ապա թէ ի գինոյն հեղու ի սեղանն՝ ութ օր. իսկ թէ ի խոնարհ՝ քառասուն օր: Ջերիս տասն արտաքոյ, զմի ի ներքս, և ապա հաղորդեսցին: Իսկ թէ ի ներքոյ բեմին հեղցի՝ քառասուն ապաշխարիցէ:

Այլ թէ իշացաւ յեկեղեցի, եթէ ակամայ՝ ութ օր արտաքոյ կացցէ, ապա թէ կամաւ անհոգացեալ՝ ամ մի: Բայց վարդապետն իշխան է՝ ըստ ապաշխարութեանն և զժամանակն կարճել: Նոյնպէս և ի պատարագին, թէ ակամայ՝ երկու ութեակս արտաքոյ կացցէ, ապա թէ կամաւ՝ այլազգաբար անյուսութեամբ յարհամարհանս եկեալ սըրբոյ խորհրդոյն՝ ի բաց կացցէ ամենեւին ի քահանայութենէն զոր ունին: Բայց ի ջերմեռանդ յապաշխարութեան յարտասուս նորա հայեցեալ վարդապետն՝ իշխան է որպէս և կամի: Այլ թէ զկարգ գոլով պատարագեալ յանգէտս՝ շաբաթ մի արտաքոյ կացցէ. ապա թէ գիտացեալ և պատարագեսցէ յաղագս պատուորաց եկեղց՝ փառասիրէ, և կամ յաղագս ընծայից բերողաց հարկեցաւ փառաւորել, զփառսն որ առ յԱստուծոյ անարգեաց, այնպիսին ընծայիւք է: Եթէ սովորութեամբ առնիցէ, ամենեւին ի բաց կացցէ ի կեանս իւր ի սուրբ խորհրդոյն. ապա թէ մի անգամ կամ երկիցս ըստ հարկի արար, և յետոյ զլքացեալ, քառասուն օր արտաքոյ կացցէ սրբութենն՝ ջերմեռանդն ապաշխարութեամբ, եւ ապա հաղորդեսցի: Եւ ապաշխարութեանն արտաքոյ եկեղեցւոյ որ լինի, ըստ հարկի մեծի որ կացցէ ի վերայ, իշխան են գիտունք՝ որպէս յաւելուլ՝ այնպէս և կարճել. այսինքն, ի հնգէ՝ մի, ի տասնէ՝ երկուս, ի քսանէ՝ չորս, յերեսնէ՝ վեց, ի քառասունէ՝ ութ, ի յիսնէ՝ տասն, ի հարիւրէ՝ քսան: Եւ այսպիսի ընտրողութիւն ի հարկաւոր ժամանակի, զջերմեռանդ կարգաւորութիւն զքահանային տեսեալ, թէ այնպիսի հանգիպի մատուցանել պատարագ՝ բարւոք է թողացուցանել ի կամս Աստուծոյ:

«ԵԿԱՅՔ ԱՆՑՅՈՒՔ ՅԱՅՆ ԿՈՂՄՆ»

(Մարկ. Դ. 35)

Երթանք մենք անդին ուր դուն կաս միայն
Ուր լոկ կը խօսիս երկընքի վերան.
Հանոյք ու փառքեր կ'անցնին վաղաժամ
Երթանք ով Յիսուս, որ քեզ մերձենամ:

Տար զիս յաւիտեան լուռ անապատներ
Ուր չկան տատասկ, աշխարհի հոգեր.
Կ'ուզեմ զիս մոռնալ, ըլլալ անմարմին,
Երթանք , ով Յիսուս, երթանք միասին:

Միայն դուն ունիս կենսատու խօսքեր
Աղօթքի լեզու, ու սիրոյ պատուէր.
Կը սիրեմ քեզ հետ ապրիլ առանձին,
Երթանք, ով Յիսուս, երթանք միասին:

Ես ալ չեմ փընտռեր բոցավառ գարուն,
Պատրանքի աչքեր, գինին փերփերուն.
Ծարաւ եմ վրնիտ բաժակ մը Ջուրին
Երթանք, ով Յիսուս, երթանք միասին:

Թէ ինձ լեղի տաս զեղուն բաժակով
Կը ձօնեմ քեզ հետ Աստուծոյ սիրով.
Տըկար է մարմինս, յոժար իմ հոգիս
Մինչեւ Գողգոթա առաջնորդէ զիս:

Այդ ի՞նչ սեւ քող է որ կը ծածկէ քեզ
Ցաճախ աչքերէս, երբեմն հոգիէս.
Ելէր, կ'ընկղմիմ ես խորը ծովուն
Մի նընջեր այլեւս երկնի զօրութիւն:

Հեռուն կը դիզուին ամպեր փոթորկի
Նաւակն հաւատքիս յողղողդ կը ծըփի.
Ցայնէ՛ հողմերուն, սատա՛ն ալիքին
Որ զիս յուզելէն դադարին, կարկին:

Ջեռքերդ արիւնոտ, օրհնութիւնդ առատ
Տարածէ Յիսուս հոգւոյս իմ ադքատ.
Առանց քու կամքիդ չի բացուիր գարուն,
Առանց քու խաչիդ չըկայ յարութիւն:

Թող որ համբուրեմ հոգւով խանդակաթ
Սայրասուր քարերն ու բեւեռն երկաթ.
Օթեւաններ կան խաչերէն անդին,
Երթանք, ով Յիսուս, երթանք միասին:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@